ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա. Շրջան երկամսեայ — Թիւ 1 — 1861 Սեպտեմբեր 1



# ԳԱՐՆԵՐԳ

ԽՕՍՔ

Մ. Գ. Գ. Փափազեանց

Բուլտա Մողուրտա




## ԳԱՐՆԵՐԳ

Հայկազունք պար բռնենք,
Թեւ 'ի թեւ ձեռն ելնենք,
Ցնծութեան ձայներով,
Եւ զուարթ սրտերով,
Զի ահա 'ի նոր բաղդ,
Ձայն կուտայ երկինք արդ,
'Ի Սբ կոչուած ուխտակիցք հաստատ,
Անձնուէր գոլ պատրաստ,

Մ. Գ. Գ. Փափազեանց



# ԱԶԴ

Երաժշտութեան արուեստը մեր Ազգին մէջ հետզհետէ զարգանալը տեսնելով, և մանաւանդ վերջին ժամանակներս Ազգային երգերու սիրժակ նշմարելով Ազգս հասարակութեան մէջ կ'փութամք կիսամսեայ հանելու պատրաստած թերթերնուս մէջ թէ եւրոպական երաժշտութիւնը դաս առ դաս աւանդելու, և թէ հայկական երաժշտութիւնը, որ հռչակաւոր՝ սիրացու պապա Համբարձում երաժշտապետին գիւտերովը ծաղկած և մինչև ցարդ 'ի լոյս ելած չէ, նոյնպէս աւանդելու համառօտ և դիւրուսոյց եղանակաւ մը թէ և կուզէինք հայկական երաժշտութեան վրայ քիչ մը երկայն խօսիլ, բայց առ այժմ զանց ընելով՝ միայն այս չափը կսեմք թէ, այս երաժշտութիւնը հայոց ըլլալով, դժբաղդաբար մէջի ձայներուն նշանները օտար լեզուի բառերով յայտնելու սովորութիւն ունէինք մինչև ցարդ, բայց ատոնց բուն հայ անունները արդէն սեպհականուած ըլլալով, մենք առաջին անգամ թէ հայ և թէ այլազգի անունները միանգամայն կ'դնեմք, իսկ այսուհետև միշտ իրենց բուն հայ անուններովը պէտք գործածենք, ինչպէս նաև Ազգային դպրոցաց մէջ ալ դասախօսութիւն եղած ժամանակ:

## ՍԿԶԲՈՒՆՔ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Եւրոպական երաժշտութիւնը եօթը ձայնագիր կ'գործածէ, որոնց անուններն են

տօ, ռէ, մի, ֆա, սոլ, լա, սի,

Ձայնագիրները հինգ գծերու վրայ և անոնց մէջ տեղը կ'դրուին, և այս գծերուն անուննէ տօղաշար, գծերուն վրայ դրուածներն են, մի, սոլ, սի, ռէ, ֆա, իսկ գծերուն մէջ տեղը դրուածներն ֆա, լա, տօ, մի:

Օրինակ

| | |
|---|---|
| ֆա | |
| ռէ | մի |
| սի | տօ |
| սոլ | լա |
| մի | ֆա |

Այս գծերուն վրայ երեք բանալի կան (քլէսը սոլ 𝄞, քլէսը ֆա 𝄢: քլէսը տօ 𝄡. Այս բանալիներուն ստէպ գործածուածներն են սոլինը և ֆային, իսկ քլէսը տօն ընդհանրապէս չի գործածուիր երաժշտութեան մէջ:

Օրինակ



Այս սոլի բանալին միշտ երկրորդ գծին վրայ կդրուի և նոյն գծին վրայի ձայնագիրին անունն ալ սոլ է. իսկ երկրորդ բանալիին զօրութիւնը իւր կարգին մէջ պիտի իմացունեմք:

Սովորաբար վեց ձև նշանագիր կ'գործածուի, որոնց անուններն են

Ամբողջ 1. 0. կէս $1/2$ 𝅗𝅥, քառորդ $1/4$ 𝅘𝅥, ութերորդ $1/8$ 𝅘𝅥𝅮, տասնըվեց երորդ $1/16$ 𝅘𝅥𝅯. եռեսուն երկու երորդ $1/32$ 𝅘𝅥𝅰
և այս վեց ձև նշանագիրները ձայներուն երկար կամ կարճ տևողութիւնները կիմացնեն իրենց ձևերովը:

Շարունակելի . . . . .

## ՍԿԶԲՈՒՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

### ԴԱՍ Ա.



| Ձայնից նշաններ | | Հայերէն | Թաթարերէն |
|---|---|---|---|
| | ,, | Փօ | եկեահ |
| | ,, | Է | աշիրան |
| | ,, | Վէ | արաք |
| | ,, | Բէ | րաստ |
| | ,, | Խօ | տիւկեահ |
| | ,, | Նէ | սեկեահ |
| | ,, | Գա | չարկեահ |
| | ,, | Փու | նէվա |
| | ,, | Էկ | հիւսէյնի |
| | ,, | Վէր | էվիճ |
| | ,, | Բէն | կէրտանիյէ |
| | ,, | Խօս | մուհայյէր |
| | ,, | Նէր | Թիզ սեկեահ |
| | ,, | Գար | Թիզ չարկեահ |
| | ,, | Փուշ | Թիզ նէվա |
| | ,, | Սուր էկ | Թիզ հիւսէյնի |

Շարունակելի
Հ. Պ. Չէրչեան:



| Ձայնից կիսաձայն նշանները | | Հայերէն | Թաթարերէն |
|---|---|---|---|
| | ,, | Զարկ | բէս հիսար |
| | ,, | Էակործ | բէս աճէմ |
| | ,, | Վերնախաղ | կէվէշտ |
| | ,, | Բէնկործ | զէրկիւլէ |
| | ,, | Խօսրովային | քիւրտի |
| | ,, | Ներքնախաղ | բուսէլիք |
| | ,, | Պարոյկ | սապա եախօտ հիճազ |
| | ,, | Թուլթ | հիսար |
| | ,, | Թուր | աճէմ |
| | ,, | Թաշտ | մահուր |
| | ,, | Ոլորակ | շէհնազ |
| | ,, | Քարքաշ | սիւնպիւլէ |
| | ,, | Սուր ներքնախաղ | Թիզ բուսէլիք |
| | ,, | Սուր պարոյկ | Թիզ սապա եախօտ Թիզ հիճազ |
| | ,, | Սուր թուլթ | Թիզ հիսար |
| | ,, | Սուր թուր | Թիզ աճէմ |

ՏՆՕՐԷՆՔ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՔ
Գ. Յ. Երանեան
Ն. Ս. Թաշճեան
Դասատուք Երաժշտութեան Ազգային դպրոցաց.